

ՀԱՅՆԵՐՆԵՐԻՑ ՓՈԽԱՌՑԱԿ ԲԱՌԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՒՐՔՆԵՐՆՈՒՄ

ԽՈՒՐՔԱԿ ԱՄԻՐՅԱՆ

Օտարալեզու և հայ մասնագիտական դրականության մեջ շատ է խոսվել և ուսումնասիրվել հայերենում թուրքերենից փոխառյալ բառերի, քերականական մի շարք ձևերի, ոճական արտահայտությունների օգտագործման ու ազդեցության մասին:

Մայրենի լեզվաբանական գրականության մեջ առաջին կարևոր հետազոտությունը 1902 թ. լույս է ընծայել Հ. Աճառյանը, «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերեն փոխառյալ բառերը հայերենի մեջ» խորագրով¹: Թուրքերենում հայերենից փոխառյալ բառերի հավաքման և հետազոտման առաջին փորձը նույնպես պատկանում է նրան: Կ. Պոլսի «Բյուրակն» ամսագրում Հ. Աճառյանը լույս է ընծայում երկու էջանոց մի հոդված, որտեղ նշում է. «Թե փոխատու լեզուն կարող է մեծ օգուտներ քաղել այն բառերեն, որ ուրիշները իրեն փոխ առած են»²: Փոխառյալ այդ բառերի ուսումնասիրությունը ոչ միայն հնարավորություն է ստեղծվում լուծելու հնչյունաբանական և շատ այլ խնդիրներ, այլև նույնիսկ «գաղափար կազմել փոխատու ժողովրդի քաղաքական մակարդակի և նրա քաղաքական, մտավոր կամ տնտեսական ազդեցության մասին՝ փոխառու ժողովրդի վրա»³: Ապա Հ. Աճառյանը կոչ է անում գավառական բանահավաքներին՝ հավաքել և հրատարակել հայկական գավառներում թուրք և թուրքախոս ժողովուրդների կողմից օգտագործվող հայերեն բառերը: Այդ կոչին արձագանքում են ոչ շատ թվով բանահավաքներ: «Բյուրակն»⁴, «Հուշարձան»⁵, «Հայաստան»⁶ և այլ հանդեսներում լույս են ընծայվում մի քանի հարյուր փոխառյալ բառերի ցուցակներ:

Հ. Աճառյանը ցուցակագրված բառերից առանձնացնում է այն բոլորը, որոնք թուրքերենում իրոք հայերենից են փոխառյալ և դրանց հանգամանորեն անդրադառնում է «Հայերեն արմատական բառարանի» համապատասխան բառահոգվածներում: Բառարանում մանրազնին ստուգաբանված այդ բառերը, որոնք դեռևս մի մասն են թուրքական փոխառությունների, վերաբերում են Հայաստանի և Փոքր Ասիայի տարբեր խոսվածքներում օգտագործված բանավոր փոխառություններին:

Մեր խնդիրն է՝ ա) բառական փոխառությունների ճանապարհով պարզել հայկական մշակույթի որոշ ազդեցություններ՝ թուրքական մշակույթի

1 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 255—295:

2 Հ. Աճառյան, Հայերեն փոխառյալ բառեր ու կոչ մը գավառացի բանահավաքներում («Բյուրակն», 1898, էջ 385—387):

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, էջ 387, 626—627, 1899, էջ 116, 314 և այլն:

5 «Հուշարձան», 1911, էջ 328, 330:

6 «Հայաստան», 1917, № 90:

վրա, բ) որոշ շափով լրացնել փոխառությունների քանակը, գ) ստուգել, թե որանց ո՞ր մասն է այժմ օգտագործվում թուրքերեն գրական լեզվում, ղ) ձշգրտել երկու լեզուներում ներկայումս առկա գրական փոխառությունների քանակը:

Այս հարցերին անհրաժեշտ է անդրադառնալ մի այլ տեսանկյունից ևս: Հայտնի է, որ որոշ թուրք պատմաբաններ ու լեզվաբաններ, խեղաթյուրելով փաստական ձշմարտությունները, այլամերժորեն ուրանում են հայկական մշակույթի որևէ ազդեցություն թուրքականի վրա: Մինչդեռ իրականում այն իր անջնջելի կնիքն է դրոշմել թուրքական մշակույթի տարբեր բնագավառներում: Օգտագործելով պատահական նմանությունները, որոշ հեղինակներ, օրինակ, ջանում են ապացուցել, որ, իբր, այլ բառերի կողքին «երգ, պար, գուսան, վարձակ» բառերը հայերենում փոխ են առնված թուրքերեն «յըր, բար, օզան, վարսաղ» բառերից⁷: Չէ՞ որ, նրանց կարծիքով, հայերը «կուլտուրապես ավելի ցածր մակարդակի վրա են եղել, քան թուրքերը»⁸: Նրանք «անգիտանում են», որ խոսք անգամ չէր կարող լինել ոչ միայն մշակութային «ցածր մակարդակի», այլ անգամ «մակարդակի» համեմատության մասին, քանի որ, երբ V դ. թյուրքական վաշկատուն ցեղերը դեռևս անասնապահությանը և որսորդությանը էին զբաղվում, հայ ժողովուրդն իր գրականությունն էր կերտում և այդ բառերն օգտագործում էր գրավոր մատյաններում:

Փոխառությունների հարցին այսպիսի տեսանկյունից անդրադառնալիս, որոշ թուրք պատմաբան-լեզվաբաններ անտեսում են նաև այն պարզ ու պատմական իրողությունը, ըստ որի, ինչպես պրոֆ. Դ. Ե. Երեմենկն է գրում, «փոխառյալ բառերը վերլուծելիս հարկավոր է հաշվի առնել բառերի բավական մեծ ֆոնդը»⁹, որոնք արտացոլում են «կուլտուրական ազդեցությունների պատմությունը»¹⁰: «Տեղական բնակչության հետ խառնվելու պրոցեսում,— շարունակում է Դ. Ե. Երեմենկ,— քոլվոր թուրքերն անցնում էին նստակեցության, տեղացի բնակիչներից յուրացնելով երկրագործության և նստակյաց կյանքի փորձը: Կարելի է ասել, որ կուլտուր-տնտեսական ասիմիլյացման գործում հաղթող էին դուրս գալիս տեղացի բնակիչները, որոնք վաշկատուն անասնապահների համեմատությամբ ունեին ավելի բարձր նստակյաց երկրագործական կուլտուրա, տնտեսության հարուստ փորձ և զարգացած հմտություններ»¹¹, «Փոքր Ասիայի թյուրքերը,— գրում է Դ. Ե. Երեմենկ,— նույնպես շունեին միասնական լեզու: Ամեն մի առանձին շրջանում կամ մարզում, ուր բնակություն էր հաստատում այս կամ այն ցեղի մեծ մասը, ստեղծվում էր տերիտորիալ բարբառ: Դրա հիմքը կազմում էր ցեղի բարբառը և դրա հետ ձուլված տեղական լեզվական հիմքը: Լեզվական ալոհ հիմքերը շատ բազմազան էին. արևմուտքում գերակշռում էր հունական հիմքը,

⁷ Prof. Mahmut R. Gazimihal, Ermenicede Tûranî Ses Unsurları („Türk Folklor Araştırmaları“ (այսուհետև՝ TFA*), 1962, № 150, S. 2604): Նաև՝ Խ. Ամիրյան, Հայ մշակույթի պատմության նենգափոխման հարցի շուրջը («Սովետական գրականություն», 1972, № 3, էջ 159—164):

⁸ M. F. Köprülü, Edebiyat Araştırmaları, Ankara, 1966, s. 268.

⁹ Դ. Ե. Երեմենկ, Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 301:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 303:

արևելքում՝ առանձին շրջաններում դա կարող էր լինել հայերենը, վրացերենը, բրգերենը, արաբերենը, ասորերենը և այլն»¹²։

Ուշ միջնադարում հայերեն բառերի յուրացումը թուրքերի կողմից, իհարկե, հետևանք էր նաև այլ գործոնների։ Որոշ ժամանակահատվածներում զրադի հարաբերություններից, սոցիալ-տնտեսական պայմաններից, բնամթերային ապրանքների փոխանակությունից և առևտրական շփումներից բացի, օսմանյան ռաղմաֆիոդական կայսրության ձուլող քաղաքականության հետևանքով իսլամացած ու բոնի թուրքացած մեծամիավ հալ զանգվածներ, անշուշտ, միանգամից չէ, որ մոռացության մատնեցին իրենց մայրենի լեզուն։ Այդ զանգվածները պահպանում էին ոչ միայն քրիստոնեական կրոնի տեղ-միները, որոնց համապատասխանները չկային թուրքերենում, այլև զրանց կողքին օգտագործում էին նաև որոշ թվով կուլտուր-կենցաղային այնպիսի բառեր, որոնցից հնարավոր չէր հեշտությամբ հրաժարվել։ Քննելով միայն Անկարայի թուրքախոս հայերի բարբառը, կհանդիպենք շատ հայերեն բառերի, ինչպիսիք են՝ ռչյորթեն, անաշ, քոդոշ, ավանակ, փանջար, հերք, դերք, մերք, մուսուր»¹³ և այլն, որոնց մի մասը հնչյունափոխվել է տեղական թուրքական բարբառի ազդեցությամբ։ Տարբեր շրջաններում որոշ բառեր յուրացվում էին ասորիների, արաբների, բրգերի և թուրքախոս հույների կողմից։ Բսկ ժամանակի հոլովմանը զուգընթաց այդ բառերը յուրացվում էին նաև թուրքերի կողմից, ընդարձակվում էին նրանց օգտագործման շրջանակները¹⁴, զրանք մտնում էին ընդհանուր լեզվի բառային ֆոնդի մեջ։

Վերջին տասը տարիների մեր հայթայթած սակավաթիվ թուրք գրականության մեջ հայերենից փոխառյալ բառերը ցարդ հասնում են մոտ երկու հարյուրի։ Դրանցից հանելով դեռևս վերջնական ստուգաբանության կարոտ բառերը, մնացյալները ստորև ներկայացնում ենք ըստ բնագավառների։

1. Երկրագործական (և նրան հարակից) բառեր, թվով՝ 27։

Ամենաշատ փոխառությունը, ըստ մեր կազմած բառացուցակի, երկրագործության և հողամշակության վերաբերյալ բառերն են, և դա պատահական չէ։ Արևմտյան Հայաստան ներխուժած վաչկատուն ցեղերը, նստակեցության անցնելուց հետո, հողամշակությունը սովորում են հայերից, որովհետև վերջիններս մեծամասնություն էին կազմում իրենց բնօրրանում և վաղուց հմտացել էին սնտեսության այդ ձևում։ Երկրագործական միջոցների և գործիքների հետ մեկտեղ եկվորները նույնությամբ կամ հնչյունական տարբերություններով (հիմնականում արևմտահայ երկաստիճան բաղաձայնական սիստեմի արտասանության և ձայնավորների ներդաշնակության կանոնի ազդեցությամբ) փոխ էին առնում այդ զբաղմունքի հետ առնչվող բառեր։ Դրանք են՝ գութան > քութան/քոթան, խարազսն > հարազան (խորզնտուն իմաստով, կա նաև խարազան հոգսիզը < խորզնտան հոտաղ), գործեռլ > քոր-

¹² Նույն տեղում, էջ 160։

¹³ «Բյուրակն» 1898, էջ 788—789 և 865—866։

¹⁴ Հայերենից փոխառյալ բառերի մի նախնադից մյուսը տարածվելուն նպաստել են նաև XIX դ. առաջին քառորդից սկսած, ռուս-թուրքական պատերազմների հետևանքով, հայկական Կարս—Էրզրում նահանգներից դեպի Սևրաստիա և մինչև Եվդոկիա կատարված թուրքական ներքին գաղթերը (Eilatun Cem Güney, Aşık Garip, s. 31; «TFA», 1978, № 351, s. 8454)։

զեիլ, խոփ>հոփ, մաճ>մաջ, մաճկալ>մաջգալ/մաժքալ, հոտաղ>հոգախ/-
հոդաք (նաև՝ հոդաղ թաշր<հոտաղի քար), մշակ>մուշաք, տափան>թա-
փան, փոխնակ>փոխու/փոհու, խորիկ>հորիք, հորովել>հորավել, մոտ-
կամ>մոդգամ/մոթքամ, հերկ>հերք, կամ(ն)>դեմ, ակոս>ազոս/հադոս,
արոս>արոս/հարոս, հանդ>հանթ, կորի(ք)>յորիք, աշարա (տարեկան)>
աշուրա, հատիկ>հեդիք, դեղ>թրզ/թեղ, խոզան>խոզան/հոզան, աղուն/ա-
ղոն>աղուն, աղոն, աղբ>ահբրն, պարան>բարան, առատամ>արադամ,
արադան:

Հետաքրքրական է նշել, որ ներկայացված այս բառերից մի քանիսը
թուրքերեն զրական լեզվում ունեն իրենց համապատասխան հունարեն փո-
խառությունները: Սա ապացույց է այն իրողության, որ եթե Արևմտյան Հա-
յաստանում հաստատվող թուրքերը երկրագործությունն ընդօրինակել են հա-
յերից, ապա Փոքր Ասիայի արևմուտքում հաստատված թուրքերը՝ հույներից:

Թուրքերեն փոխառություններ

հերք
թրզ
կամ
արոս

Հայերենից

հերկ
դեղ
կամ(ն)
արոս

Հունարենից

քիրիզմա
թընազ
դուլին
սադաս

Ոչ երկրագործական բառեր

դոմ/քոմ
փեղ
հիմ

զոմ
բակ
հիմ(ք)

մանդրա
ալլու
թեմե¹⁵:

2. Կենդանիների անվանումներ և անասնապահական բառեր, թվով՝ 12:

Իշամեղու>աշմեղուն, անիծ>անրդ, քուռակ>քուրիկ, մոզի/մոզիկ>
մոզիք/մոզակ, մոծակ/մոզուկ>մուշուք, կուռթ (թխսահավ)>քուրք, անաճ
(հավ)>անաշ, թառ>թար, կոտոշ>զոդոշ/զոդըշ, տավար>դավար, նախիր>
նախրր/նահըր (որից և՛ նահըրջը<նախրապան), մսուր>մյուսյուր¹⁶:

3. Բույսերի անվանումներ, թվով՝ 5:

Ավելուկ>ավելիք, բանջար>փանջար, պատիճ>բադիշ, բազուկ>փե-
զիք/փազը, փրփրեմ>փրփրիմ:

4. Շինարարության և կացարանի վերաբերյալ բառեր, թվով՝ 18:

Մարդակ>մերթեք, գերան>քերան, սալ (նաև՝ սալաքար)>սալ (սալ-
թաշը), լոզ (նաև՝ լոզքար)>լոզ (լոզթաշը), հյուղ>հուղ, որմ>արմ, խը-
րամ>հրրամ, ջրորդան/ջորդան>չյորթեն, խիպար>հրբար, քարուկիր/քար-
կիր>քյարդիր/քյավդիր, հիմ(ք)>հիմ, գուռ(ն)>քուռնա/քուր, մառան>մա-

¹⁵ Թուրքերենում հունարենից փոխառյալ բառերի մասին տե՛ս Գ. Ե. Երեմեև, Նշվ. աշխ., էջ 306, 308:

¹⁶ Թեև թուրքական ցեղերի մեջ անասնապահությունը զարգացած էր, սակայն այն սահ-
մանափակվում էր մանր եղջերավոր անասունների խաշնարածությամբ: Ճավար, մոզիկ, նա-
խիր, գոմս բառերի փոխառությունները հաստատում են, որ խոշոր եղջերավոր անասունների
խաշնարածությամբ նրանք սկսել են զբաղվել հայերի հետ շփվելուց հետո:

յան, մարագ>մերեք, բակ>փեզ, կապան>գերեն/բափան, թումբ>թունփ, վարպետ>վարքեթ/բարբեթ:

5. Պարատեսակներ, երգեր, թվով՝ 12:

Պար>բար, չափ պար>չափբար, ծափիկ-ծափիկ>չեփիք/չեփիք, տասն-չորս>դասնըչորս, աղջիկ>ահչիք, դե շորորա>դեշորորա, վարդավառ>վարդիվար/մանթիվոր, պոչ>փյոչ, պոչիկ>փյոչյուր, վարձակ>վարսաղ, ինչպես նաև՝ «բարդըզ պարը» և «էրմենի բարլարը», որոնք թարգմանություններն են՝ «պարտեզի պար» և «հայկական պարեր» բառակապակցությունների:

6. Արհեստների և գործիքների վերաբերյալ բառեր, թվով՝ 8:

Մուրճ>մուրչ, կացին>դասին, ճաղ>ջաղ, մանած>մանր, մաղման>մազման, կեռ>գեր, քարման>քիրման, ղող(իլ)>զող (լամաք):

7. Կենցաղային և տնտեսական իրերի վերաբերյալ բառեր, թվով՝ 21:

Կաթալիկ>քաթիլիք, փարտիչ>փարդիչ, կուլիկ/կոյլակ>քյուլեք, սլատ-րույզ>բյոդյուրյուր/բեդրիք, ցախավել>սաքավիլ/սաքբավուլ, տաշտ>դեշթ, աղջուր/հողջուր>աղչար, սավան>սավան, դարակ>թերեք, թուղթ>թուհթ, քար>գար, գնդակ>քընդաք, շորթթու>չորթութու, շուրթ (թոնրի)>շուրթ, կլիկ>զըլիք, բաղարջ>փագաչ, կոտ>գոթ/քոթ, ելտ>էրթ/արթթ, մոծիր>մըջրր, անխեղ>անթըք, թել>թել (դերձան):

8. Տարբեր բնույթի բառեր, թվով՝ 31:

Ապրիս>աբրիս, ապրիլ>աբրիլ/աբրըլ, մայիս>մայրս, ապուշ>աբուշ, եղբայր/աղբար>ահփար, աղջիկ>ահչիք, տղա>դրղա, պղտիկ>բըղղըք, տուտու>դուդու, մորուք>մորուք, անկուտի>անդուդի, թագավոր>թեքֆուր, ազնավոր>ազնավուր, չափ>չափ, դատարկ/դարտակ>դերդեք, խավ>հավ, խանութ>հանոթ, կուլ/կուլիկ>գուլիք, փսոր/փշուր>փյուսյուր, շալակ>շե-լեք, փոթ>փոթ, շիլ>շիլ, մեկ>մեք, մատիկ>մադիք, ավանակ (անմիտ-անբան իմաստով)>ավանաք, կուպիտ>գուբսթ, ջերմուկ>ջերմիք, հակառակորդ>հագարագորթ¹⁷, օրինակ>Օրենեք, չիր>չիր, պարտեզ>բարդըզ:

9. Մի քանի դարձվածքներ և բառաբարդություններ, թվով՝ 6:

Անդըրա քալասը<անտեր մնաս (որպես անեծք), ղըրզըրին կերթաս<իզուր կգնաս, չես կարող գնալ. ափազ<ափի չափ, բիշ. աղըքիշ<չաս քիշ, ջրբըթլը<ծպոռտ. հանզո<ծո, ա յ տղա:

Թյուրիմացությունների տեղիք շտալու համար նշենք, որ մեր ներկայաց-րած բոլոր բառերը չէ, որ բնիկ հայերեն են: Դրանց մեծ մասը պահպան-կան, ասորական, հունական, խեթական, արաբական, կովկասյան ծագում ունեն: Սակայն նախքան հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունները՝ դրանք արդեն անցել են հայերեն լեզվի բառաֆոնդի: Հետևաբար, այդ բա-ռերը անմիջական փոխառություններ են հայերեն լեզվից՝ թուրքերենում¹⁸:

¹⁷ «Հագարագորթ» բառը թուրքերենում օգտագործվում է իրրե բեմական տերմին:

¹⁸ Մենք թվեցինք բնդամենք 140 բառ: Դրանց հարկ է ավելացնել դորգագործության բնագավառում օգտագործված 13 բառ ևս, որոնց հոգվածով անդրադարձել է Հ. Գալստյանը. նա, իրականում, նշել է 16 բառ, բայց դրանցից հինգը՝ «թել, խավ, չափ, օրինակ, հիմք» մենք ևս ներմուծել ենք մեր բառացուցակը, որովհետև դրանք օգտագործվում են ոչ միայն գորգագործության, այլև տարբեր բնագավառներում: Հ. Գալստյանի նշած մյուս բառերն են առիշ>արըշ/էրիշ, միտ(ք)>բըթըթ/բըթը, խալի (զորդ)>հալը, անկուած/արկած>արգաչ (ուղ-

ներկայացված 140 բառերից 68-ը քննվել և ստուգարանվել են Հ. Աճառյանի «Նախիրեն արմատական բառարանում»։ Նշանակում է. մենք հավաքել ենք ևս 72 բառ, որոնք դուրս են մնացել բառարանից, բանի որ դրանք թուրք գրականության մեջ սկսել են մուար գործել երեսնական թվականներից։

1966 թ. թուրքերեն լեզվի միության նախաձեռնությամբ Կորրորդ ապագրության արժանացած և, հեանարար, ամենից հավաստի «Թուրքերեն լեզվի բառարանում» մեր հավաքած 140 բառերից կան մաթսուներ, սակայն դրանց հավակական ծագումը չի նշված։

Հայալեզու բառարանագիր Փարս Թուղլաջրի (Բարսեղ Թուղլաճյան) 1971—1974 թթ. լույս ընծայած «Օվկիանոս թուրքական հանրագիտական բառարանում» մեր թվարկած բառերից կա 69-ը, որոնցից 18-ի կողքին նշված է հայկական ծագումը։ Նշանակում է, թուրքերենում հայերենից փոխառյալ բառերի բառարանային շրջանառությունը (որոնց 30 առկուսը, մեր հաշվումներով, արդեն գրական փոխառություններ են) կազմում է 60—70 բառ, նույնիսկ եթե արատարասողների կողմից անտեսվում է դրանց հայկական ծագումը։

Մեր ձեռքի տակ եղած թուրք գրաստությունից հավաքած 140 փոխառյալ բառերը կազմում են միայն մի մասը այն ընդհանուրը, որն օգտագործվում է Թուրքիայի գավառների խոսվածքներում և գրական երկերում։ Մեր և տաղոտությունները համոզում են, որ այդ քանակը կարելի է կրկնապատկել, եռապատկել։ Թուրքական գավառական բառարաններից միայն մեկը՝ «Derleme Sözlüğü» (որի հրաատարակությունը դեռ ամբողջացած չէ) «Ա» և «Բ» հատորներում դրել ենք ավելի քան 40 բառ, որոնք հայկական ծագում ունեն։ Մենք այս հոգվածում ներկայացրել ենք դրանցից միայն նրանք որոնց հանդիպել ենք ժամանակակից թուրք գրականության մեջ։ Օրինակ՝ դանց ենք առել անարատ > անարաթ, աշուգա > աքուքա, առաստաղ > արրս-ղաղ, ավերաս > ավերեր, պատ > բաղ, պաղապուր > բազաբուր, պակաս > բազաս, պաշ > բաշը (նաև՝ բաշ չթմեր < պաշի) և այլ բառեր։

Այսպիսով, հայերենից փոխառյալ բառերը թուրքերենում մի անգամ ևս առատատում են այն պատմական ճշմարտությունը, թե որքան խոր ու բազմազան է եղել նվաճված հայ սոցիոլոգի ազդեցությունը թուրքական մշակույթի ասարեր բնագավառների վրա։

АРМЯНСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

ХАЧИК АМИРЯН

Резюме

По предложению академика Р. Ачаряна еще в конце XIX в. началось изучение армянских заимствований в турецком языке, однако этот процесс касался большей частью «устных заимствований». Иссле-

զայայաց ձգվող թելեր), վարգել > վարգամ, թելի/թելիկ թելի, թիրթ՝ թերթ, թավ > թավ, տորոն > ղորոն/գորոն, ագր(ն) > ագափ (ծոպ իմաստով), խաշ > խա, քաթան > քեթեն, փե-
թակ > փեթեք (շարժություն հայայան, Կորդագործության մեջ կիրառվող հայերեն փոխառյալ բառեր թուրքերենում, 2002 ԳԱ «Երաբեր», 1977, X՝ 8, էջ 85—99)։

дования показывают, что в настоящее время увеличивается число заимствованных армянских слов в турецком языке. Часть сотен армянских слов, вошедших в свое время в анатолийские говоры турецкого языка, постепенно входит в словарный оборот и в современную турецкую литературу. Посредством слов, представленных в определенных словосочетаниях, становится возможным не только подтвердить влияние армянской культуры на развитие турецкой культуры, но и установить, что, если в армянском литературном языке используется всего порядка 20 турецких слов, то в современном турецком литературном языке число заимствований из армянского языка намного больше.